№ 127 Երեքշաբթի Նոյեմբերի 10 1887 Երեքշաբթի Նոյեմբերի 10 № 127

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԵԿՈՂ 1888 ԹԻԻՆ

# „ՄՇԱԿ“

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով։ Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշեվի տանը։)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Առաջիկայ տարվայ «ՄՇԱԿԻ» պրոգրամը նոյնը կը լինի, այսինքն I. Առաջնորդող յօդուածներ. II. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ (հասարակական, դատաստանական, տնտեսական և այլն) Թղթակցութիւններ, լուրեր. III. Կառավարչական կարգադրութիւններ. IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդհանուր յօդուածներ, Թղթակցութիւններ, լուրեր. V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ և ԲՕՐՍԱ. VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ֆելիետոններ, ճանապարհորդութիւններ, ազգագրական, ուսումնական յօդուածներ, վէպեր և այլն. VIII. ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ցայտարարութիւններ ընդունվում են ամեն լեզուներով։ Վճարը՝ բառին 2 կոպէկ։ Տասն անդամից աւելի տպվող յայտարարութեան համար նշանաւոր զիջում կը լինի։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիֆլիսը իր դերը չէ կատարում. Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան նիստը. Նամակ Ախալցխայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ցարութիւն պատրիարքի հրաժարականը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատկերներ Վասպուրականի հայոց կեանքից.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՖԼԻՍԸ ԻՐ ԴԵՐԸ ՉԷ ԿԱՏԱՐՈՒՄ

Մի փոքր ուշադրութեամբ հետևելով մեր կեանքի ընթացքին, դժուար չէ համոզվել, որ Թիֆլիսը տիրապետող ազդեցութիւն ունի մեր դաւառական կեանքի վրա։ Անդրկովկասի այդ հռչակված քաղաքը ճնշում և ազդում է ոչ թէ միայն մեր երկրի տնտեսական և առևտրական կողմի վրա, այլ և իրանից կապված է պահում այդ երկրի մտաւոր և բարոյական զարգացումը։ Այդ անհերքելի է։ Հետևեցէք մեր դաւառական կեանքին, տեղեկացէք թէ ինչ կարծիք և համոզմունք ունի դաւառացին Թիֆլիսի մասին, և դուք էլ կը հաւաստիանաք այդ իրողութեան մէջ։

Դուք պատահում էք դաւառական մի յետ ընկած անկիւնում մի խումբ գեղջուկների, որոնք արաասուքն աչքերին մնաս բարեաւ ասելով իրանց սիրելիներին և ծննդավայրին, օտարութիւն են ուղևորվում փող վաստակելու։

«Ո՞ւր, բարով», հարցնում էք դոցանից,—Թիֆլիս, պատասխանում են նոքա։

Ահա ծնողները և աղգականները բարի ճանապարհ են մաղթում տասներկու տարեկան պատանուն դէպի հեռու օտարութիւն. ծնողները նրան ուղարկում են ուսում առնելու։

«Որտեղ», հարցնում էք դուք,—Թիֆլիս պատասխանում են ձեզ։

Առևտրականը «խրիդի» է գնում. Ղարաբաղից, Նուխուց, Երևանի կողմից վաճառականը գնում է ապրանք բերելու և աշխատանք անելու։

«Որտեղից», հարցնում էք դուք,—Թիֆլիսից, պատասխանում են ձեզ։

Վաշխառութեամբ [illegible] տացած աղան իր ընտանիքի հետ գնում է աշխարհատեսութիւն անելու, գնում է քաղաք և մարդ տեսնելու, մի փոքր կեանք վայելելու։

«Ուր, որ քաղաքն է գնում նա», դուցէ կը հարցնեն հետաքրքրվողները,—Թիֆլիս։

Եւ համարեա ամեն անգամ դէպի Թիֆլիս, որը ձգում է դէպի ինքը մարդկական զօրութեամբ դաւառական կեանքի թարմ ոյժերը և ուշադրութիւնը։ Սակայն Թիֆլիսի ազդեցութիւնը դրանով չէ սահմանափակվում. նա ներգործում է մեր երկրի մտաւոր և բարոյական կեանքի վրա ևս, և միանգամայն արդարացի է այն կարծիքը, թէ Թիֆլիսը Անդրկովկասի մտաւոր կենտրոնն է։ Մեր դաւառները իրանց մտաւոր մնունդը, փոքրիկ բացառութեամբ, Թիֆլիսից են ստանում։ Թիֆլիսն է տալիս դաւառներին և գիրք և լրագիր, և հասարակական դաղափարներ, նա է հաղորդում դաւառներին անային կեանքի նորութիւնները, և մինչև անգամ նորաձևութեան դասերը։ Դաւառական դպրոցը Թիֆլիսից է ստանում իր վարժապետը և վարժուհին։

Այդ բոլորը այդպէս է եղել տարիների ընթացքում, և այսօր մեր դաւառները շարունակում են իրանց բոլոր գործերի համար առաջնորդ և ղեկավար համարել Թիֆլիսը։ Ցարաբաղդաբար, հարիւր քսան հազար բնակիչ, բազմաթիւ դպրոցներ, ընկերութիւններ, լրագիրներ, հասարակական և վարչական ամեն տեսակ հաստատութիւններ ունեցող Թիֆլիսը այժմ աջողութեամբ չէ կատարում իր այդ մեծ դերը։ Նրա հռչակը աւելի մեծ է, քան թէ իսկական իրողութիւնը։ Եւ մինչդեռ մի կողմից մեր դաւառները կարօտութիւն են զգում աւելի կենդանի և աւելի զօրեղ ղեկավարի, միւս կողմից Թիֆլիսը չէ կարողանում տալ այն, ինչ որ նրանից սպասում է դաւառացին, որը ամեն բանում սրան հետևել և նմանվել է ուզում։

Մեր հռչակաւոր քաղաքը իր այժմեան վիճակով, իր մտաւոր և բարոյական այժմեան պայմաններով [illegible] ուղևորութեան և անընդհատ գործունէութեան ու զարգացման դասեր տալու։

«Ինչու՞ այդպէս ընկած դրութեան մէջ են ձեր դպրոցները», հարցնում էք դուք դաւառական դպրոցների ղեկավարներից։

«Խօմ Թիֆլիսի դպրոցներից վատ չեն», պատասխանում են նոքա մի առանձին հպարտութեամբ։

Փորձեցէք հարցնել դաւառացի երիտասարդներին թէ ինչ են անում, ինչով են զբաղված։

«Թիֆլիսի հռչակաւոր երիտասարդութիւնը ինչ է անում, որ մենք ինչ անենք», կը պատասխանեն նոքա ձեզ։

Այսպիսի օրինակներ շատ կարելի է բերել։ Թիֆլիսի լուսաւորված կանանց անտարբերութիւնը մեռելութիւն է ներշնչում դաւառացի կանանց մէջ. Թիֆլիսի ընկերութիւնների ողորմելի դրութիւնը խեղդում է դաւառական քաղաքների ընկերութիւններին. Թիֆլիսի գործիչների անգործունէութիւնը քնեցնում է դաւառական գործիչին. երբ Թիֆլիսը զուրկ է կանոնաւոր բեմից, դաւառներում թատրոնը քայքայվում է, և այլն և այլն։

---

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՊԱՏԿԵՐՆԵՐ

### ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԻՑ

(Իմ յիշողութիւններից)

—

Մենք չունենք այսօր փոքր ի շատէ լիակատար տեղեկութիւններ ոչ միայն ամբողջ Թիւրքիայի, այլ նոյն իսկ նրա մէկ որ և է բազմահայ նահանգի մարդոց տիպերի, նրանց իսկական կեանքն ընդգրկող հանգամանքների մասին...

Ինչու գրեցի ես իմ պատկերները։

Երբ ես չորս տարի առաջ ուսուցչական պաշտօնով Վան տեղափոխվեցայ, հէնց առաջին օրերից մի ապշութիւն տիրեց վրաս։ Կարծես մարդիկը, նրանց կեանքի հանգամանքները, սովորութիւնները, բնաւորութիւնը, նիստ ու կացը, խօսակցական ձևը՝—մի չեղած ու տարօրինակ բան էին ինձ համար։ Ո՛չ այդպիսի մարդիկ և ո՛չ այդպիսի կեանք կարծես երբէք չէի տեսած ես. դա մի հանելուկ էր ինձ համար և շատ բաղդրեալ հանելուկ։ Եւ որքան աւելի էի խորասուզվում իմ նախկին դաղափարների մէջ տաճկա-հայոց կեանքի մասին, այնքան աւելի հիասթափվում ու կաշկանդվում էի ես։ Ուսումնասիրել այդ հազուադիւտ, բաղդրեալ ու տարօրինակ կեանքը, վերլուծել նրա ամեն մի բարդ երևոյթն ու հանգամանքը—եղաւ իմ ակամայ պահանջն և պարապմունքը։ Այդ հետաղօտութեան համար ես զոհեցի ամեն բան, և՛ ժամանակ, և՛ հանդիստ, և՛ գիշերային քուն, և՛ առողջութիւն, և՛ երջանկութիւն... Ես պտտում էի տնէ տուն, շրջում մերձակայ դաւառակները, խօսեցնում ամեն հասակի ու դասակարգի մարդոց։ Եւ երբէք չէի թերանում մրցոնել նորանոր տպաւորութիւններ յիշատակարանիս մէջ։ Ինչ որ ծուլանում էի արտագրել թղթի կտորի վրա, այն ես դրոշմում էի սրտիս մէջ, սև մելանից աւելի անջնջելի ներկով։ Եւ ով կարող է հերքել, թէ սրտի յիշատակարանը մելանի հետքերից էլ շատ անգամ աղդու չէ։

Բայց Վանը այնպիսի մի կենտրոն է, ուր անընդհատ երթևեկութիւն կայ Տաճկաստանի շատ կողմերից։ Ինձ ոչինչ չէր արդելում ծանօթանալ նաև այդ հիւրերի հետ և մանրամասն տեղեկութիւններ ձեռք բերել նրանց բնակած վայրերի մասին։ Այնուհետև, վանեցիք հարիւրներով գնում են ամեն տարի Պոլիս ու վերադառնում։ Դա մի լաւ միջոց էր ինձ համար ծանօթանալ նաև պոլսեցիների կեանքի ու նրանց գործողների հետ։ Այդպիսով ես դիւրութիւն ունեցայ ոչ միայն Վասպուրականը, այլև ամբողջ Թիւրքիայի-կեանքը ըստ բաւականին ուսումնասիրել։

Երկու ամիս առաջ վերադառնալով (1886—1887) իմ հայրենի—Թիֆլիսը, ես ամապարեցի կարգի բերել իմ տպաւորութիւնները։ Ես անհրաժեշտ համարեցի և իմ մեծ պարտքս կարծեցի հաղորդել ստացած արդիւնքներս իմ հայրենակից կովկասցիներին։ «Յիշողութիւններ» կարելի է գրել շատ ձևով, բայց նիւթին և մարդոց աւելի կենդանութիւն տալու համար՝ վիպական պատկերների ձևը նախադասեցի։ Եւ այդ բանում սիրելի էր ինձ հետևել Տուրգենեվի «Записки охотника»-ի մեթոդին, որովհետև իմ «Պատկերներս» էլ записки, յիշատակարան, յիշողութիւններ են։

Սոյն վէպիկները հրատարակելով, ես չունեմ որ և է առանձին ձգտում, տենդենցիա... Ես ուզում եմ դնել ընթերցող հասարակութեան առաջ մի հետաքրքիր ու անծանօթ աշխարհ իր լիակատար ամբողջութեամբ։ Եւ անել այդ՝ առանց երևակայութեան ու բանաստեղծական ազատութեան, այլ ներկայացնել սոսկ իրականութիւնը, ճշմարտութիւնը, եղած դրութիւնը իր խայտաճամուկ գոյներով, լուսանկարչի մը կրաւորական դիրքով։ Ընթերցողը միջոց կունենայ այդպիսով ճանաչել տաճկա-հայ հոգևորականին, վաճառականին, պետական պաշտօնեային, վաշխառուին, ուսուցչին, արհեստաւորին, գիւղացուն, գեղեցիկ սեռի ներկայացուցչին.... և այդ ամենը իրապէս, ճշմարտապէս և ոչ երևակայութեամբ ու կարծեօք։

Պիտի դոհացնեմ արդեօք ընթերցողներիս,—այդ մասին ինձ չէ պատկանում դատավճիռ տալ։ Գիտեմ միայն, որ դեռ շատ անվարժ է գրիչս լեզուի ու արհեստի կողմից, բայց իցէ թէ ընթերցողը գոհ մնար լոկ իր ստանալի պաշարից։ Եւ այդ քիչ մխիթարութիւն չի լինի ինձ համար։

«Պատկերներս» պիտի բաղկանան չորս հատորից, իւրաքանչիւրը մօտ 400 երեսով։ Ձեռքիս է արդէն երկրորդ հատորը և ամբողջապէս լոյս պիտի տեսնէ (հատոր հատոր) միայն մէկ տարվան մէջ։ Իւրաքանչիւր հատորի գինը ես նշանակում եմ մէկ մանէթ, որպէս զի մատչելի լինի շատերին *)։

«Պատկերներս» կոչեցի «Վասպուրականի կեանքից», զի նիւթերի մեծ մասը այնտեղից, փոքրամասնութիւնը՝ ուրիշ նահանգներից ու Պոլսից է վերցված։

Այժմ մէկ երկու խօսք գրքիս լեզուի մասին։

Առաջին հատորիս ընթերցողը պարզ տեսնում է, որ իմ սեփական խօսքերը տարբեր են լեզուի կողմից՝ հերոսներիս խօսածից։ Խորին համոզմամբ ես համեմեցի փոքր ինչ լեզուս Պոլսի գրականութեան գոյներով։ Հերոսներիս խօսացուցի իրանց արտասանած, բնական ձևերով։ Բայց դա իսկապէս Վանայ լեզուն չէ, այլ մի խառնուրդ այդ բարբառի և Պոլսի գրական լեզուի։ Վանեցիք փոքր ի շատէ այբբէն գիտացող մարդու հետ իրանց լեզուով չեն խօսում։ Միայն գիւղացիների համար պահպանեցի ես անդարդ բուն Վանայ բարբառը։

Ընթերցողներին չը խրտնեցնելու համար, հետեւեալ հատորների մէջ Վանայ բարբառը պիտի լավի միայն քանի մի անձանց բերանից, իսկ միւսները պիտի խօսեն ռուսա-հայոց կամ, աւելի ճիշդն ասած, իմ փոքր ինչ խառնակեալ ոճով։

Եթէ Տէրն յաջողի և չորս հատորներն էլ լոյս տեսնեն, ես միտք ունեմ գրել նաև մի հինգերորդը, որ բացառապէս նուիրված կը լինի Վասպուրականի պատմութեան, Վանայ բարբառի քերականութեան և տեղական ու օտարամուտ բառերի հետազօտութեան։

Հետեւեալ հատորները չեն կարող լոյս տեսնել, մինչև որ առաջինը չարժանանայ մեր ընթերցող հասարակութեան հաւանութեան ու ընդունելութեան։ Ցանկալի էր, որ հաւանողները լոկ գովեստով չը շատանային, այլ աղատէին գրքերս գրավաճառանոցների անգործ թողից ու ցեցից.... Իսկ եթէ իմ տաժանելի աշխատանքը և բացառապէս այս գործի գլուխ բերելուն նուիրվելս մի անպէտք զլխացաւութիւն համարվի,—ես ինքս առաջինը մի վառված օջախ պիտի նետեմ գրքուածներս։

Համբերենք ու տեսնենք....

18 հոկտ. 1887 թ. Տիգրան Փիրումեանց

Ի Թիֆլիս։

*) Անկախ այս հատորներից, ես միտք ունեմ նոյնպէս գրել 5—20 կոպէկանոց, էժանագին բրոշիւրներ մեր հասարակ ժողովրդի համար, նիւթ առնելով տաճկա-հայոց և ռուսա-հայոց կեանքից։

---

## ՀԻՆ ՍԵՐՈՒՆԴ

### Ա

Ես շատ էի սիրում երթալ մուղսի Ստեփան աղային։ Կարծես հիմա էլ աչքիս առաջն է այդ ութսունամեայ առաքինի ծերունին։ Շաբաթը մի

Այս անպայման ցաւալի երևոյթ է. ցաւալի է, որովհետև մեր դաւառները զուրկ են առայժմ անկախ և ինքնուրոյն գործունէութեան ընդունակութիւնից, նոքա օրինակ և ղեկավար են ուզում։ Այդ օրինակը Թիֆլիսը պէտք է տայ. այդ ղեկավարը Թիֆլիսը պէտք է լինի. տարաբաղդաբար Թիֆլիսն էլ իր այդ դերը քանի գնում է, այնքան էլ վատ է կատարում, և իր հասարակական մեռած կեանքով, մտաւոր անշարժութեամբ, անգործ երիտասարդութեամբ և թմրած հասարակութեամբ՝ մի անտանելի թմրութիւն է բերում գաւառական ամբողջ կեանքի վրա։

Խ. Մ.

## ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԵԵՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԸ

Նոյեմբերի 6-ին տեղի ունեցաւ Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան հերթական նիստը, որին ներկայ էին ընկերութեան անդամներից շատերը և մի քանի էլ կողմնակի անձինք։ Նիստը բանալով, ընկերութեան փոխ-նախագահ իշխան Ջօրջաձէ առաջարկեց ժողովին յարգել հանգուցեալ Դիմիտրի Կիպիանիի յիշատակը, ոտքի կանգնելով, որը բաւական նպաստել է ընկերութեան զարգացմանը, և վարել է ընկերութեան թէ փոխ-նախագահի և թէ նախագահի պաշտօնակատարի պաշտօնը։ Ժողովը ուրախութեամբ [illegible] լով յայտնեց իր համակրութիւնը դէպի հանգուցեալը։ Դրանից յետոյ տեղի ունեցաւ նոր փոխ-նախագահի ընտրութիւնը, որովհետև իշխան Ջօրջաձէ հրաժարվեց իր պաշտօնից։ Փոխ-նախագահ ընտրվեցաւ Մ. Կուչայեվ։ Ապա ժողովը լսեց պ. Ա. Արասխանեանի զեկուցումը «համայնական միջոցներով արքունի ամբարներին հաց հայթայթելու մասին»։ Պ. Արասխանեան այդ զեկուցումը պատրաստել էր ընկերութեան յանձնարարութեամբ, որը սրանից մի քանի ժամանակ առաջ հրաւէր էր ստացել պետական կալուածների մինիստրութիւնից մասնակցելու այդ հարցի մշակութեան մէջ։ Մինիստրութիւնը դրանով նպատակ ունի անմիջական յարաբերութիւն հաստատելու արդիւնաբերողների և սպառողների մէջ, առանց զանազան կապալառուների միջամտութեան, որպէս զի կարելի լինի նպաստել դանձարանի և հողագործների շահերին։ Պ. Արասխանեան իր զեկուցման մէջ ընդհանրապէս այն միտքը յայտնեց, որ կարելի է համայնական միջոցներով արքունի ամբարներին հաց մատակարարել, որով և կարելի կը լինի վերացնել մէջտեղից կապալառուների միջամտութիւնը, յարակցելով, որ այդ բանը աջողութիւն կարող է գտնել գլխաւորապէս այն տեղերում, որտեղ ցորենի մշակութիւնը շատ զարգացել է։ Զեկուցման մէջ չէին բերված այդ համակրելի մտքի մանրամասնութիւնները, և դրա գործադրութեան այս կամ այն միջոցները, որի պատճառով և տեղի ունեցան բաւական խիստ առարկութիւններ ժողովականների կողմից։ Հարցը վերջնական որոշում չըստացաւ, և վիճաբանութիւնները յետաձգվեցին մինչև յաջորդ ժողովը։ Ի դէպ, մի նկատողութիւն. Կովկասեան Գիւղատնտեսական «գիտական» համարվող ընկերութեան ժողովներում շատ անգամ տեղի են ունենում վիճաբանողների մէջ այնպիսի վիրաւորիչ յարձակումներ, կոպիտ ակնարկութիւններ, և կրքոտ նկատողութիւններ, որոնք ոչ թէ միայն պատիւ չեն բերում գիտական ժողովին, այլ և միանգամայն դցում են նրա յարգը և նշանակութիւնը։ Ժողովականներից շատերը բոլորովին սովորութիւն չունեն յարգանքով վերաբերվելու դէպի ուրիշի կարծիքը, սովորութիւն չունեն իրանց խօսակցութեան ժամանակ քաղաքավարութեան ամենահասարակ կանոնները պահպանելու, որի պատճառով և տեղի են ունենում անախորժ դէպքեր, որպիսին տեղի ունեցաւ վերջին ժողովում։ Ով ականջ ունի լսելու, թող լսի։ Ցաւալի է որ ժողովը հասկանայ իր պատիւը և յարգէ ընկերութեան պատիւը։

## ՆԱՄԱԿ ԱԽԱԼՑԽԱՑԻՑ

Հոկտեմբերի 30-ին

Ամեն լուսաւորված ազգ, զիւղ թէ քաղաք, ունեն իրանց դերեզմանոցները. որքան ինձ պատահել է տեսնել այդ նուիրական վայրերը, չեմ տեսած այնքան անշուք դերեզմանոց, որպիսին կայ Ախալցխայում։ Մեր դերեզմանոցը այցելողը տեսնում է միմիայն ընդարձակ դաշտի վրա ձգուած քարակոյտեր, ամեն կողմից ազատ ճանապարհներով. այդ սրբազան վայրերով է քշում հովիւը իր նախիրը և մեր նախնեաց չիրիմների վրա արածեցնում իր անասունները. այդտեղ է հանգիստ առնում և փայտահատը, քշելով իր աւանակների երամակը դէպի անտառ փայտ կտրելու և վերադարձին նոյնպէս. այդտեղ են գարուն թէ ձմեռ ընտանի և թէ վայրենի գազանները իրանց խընջոյքները և տօնախմբութիւնները կատարում— այդտեղ են ժամադիր լինում սրիկաները իրանց ընկերներին գիշերային արշաւանքի համար և այդտեղ են պատսպարում իրանց կողոպուտները։ Ահա հովիւը և իր նախիրը, փայտահատը և իր անասունները, ընտանի և վայրենի գազանները, սրիկան և իր կողոպուտը միմիայն գոհ են մեր անհոգութիւնից, որ չենք վրդովում նոցա հանգստութիւնը։ Ինչ անտանելի և դժոխային տագնապ, յուսահատութիւն տանջում է մեզ, երբ մենք լացով և ողբով յուզարկաւորում ենք մեր սիրելիների նշխարներին դէպի գերեզմանոց, այնտեղ իրանց հարազատ մօր գրկին յանձնելու. ճանապարհների, մինչև կոկորդը խրվելու չափ փափկացրած ցեխը, դեռ գերեզմանոց չը հասած, արդէն նոր վիշտ և նոր լաց է յարուցանում մեր սրտի մէջ. տրտնջում ենք հանգուցեալի բաղդի վրա և նախախնամութեան վրա թէ, ինչու նա զրկելով մեզ մեր սիրելիից, չը կամեցաւ թեթևացնել մեր վիշտը գեղեցիկ և փայլուն արև պարգևելով։ Բայց, մի՞թէ արեգակը նոյնպէս միշտ պարտաւորված է մեր գերեզմանոցի ճանապարհի վրա հսկելու, որ ցեխ չը լինի. մի՞թէ բնութիւնը իր հրաշքներով և փառաւոր ստեղծագործութիւններով միշտ ժպտելու է մեզ, ամայի և չոր դետի վրա հովանաւոր ծառաստաններ բուսցնելու։ Բնութիւնը կատարում է իր պարտքը, եթէ մենք նպաստելու լինենք մեր աջակցութեամբ։

Ի՞նչ արժէր ամբողջ քաղաքի համար գերեզմանոցի շուրջը հասարակ կերպով ցանկապատելը, և մի հարիւր սաժէն խճուղի չինելը մինչև Սառաֆեանցի տան մօտ։ Եթէ մեզ քաղցր են մեր սիրելիների չիրիմները, եթէ մենք յարգում ենք նրանց յիշատակը, դեռ չեմ ասում թէ մենք զարդարենք նրանց չիրիմները հովանաւոր ծառերով և ծաղիկներով, ինչպէս այդ ընդունված է լուսաւոր երկիրներում, չեմ ասում թէ գեղեցիկ քանդակագործված արձաններ կանգնեցնենք նրանց վրա, թէ հանդստեան եկեղեցի և պահապաններ կարգենք, դրանք անհատների կամքից են կախված. բայց թէ հասարակ ցանկով պատելը և մի փոքր տարածութիւն խճուղի չինելը, ընդհանուր պարտք պէտք է համարենք մեզ համար և առանց ժամանակ կորցնելու, խորհրդով, դիմենք մարմնաւոր իշխանութիւնից թոյլտուութիւն խնդրելու, կամաւոր հանգանակութիւն անելու քաղաքումս, առաջարկութիւնս գլուխ բերելու համար։ Ինձ հետ և շատերը յայտնել են պատրաստակամութիւն մասնաւոր շրջանում. ցանկալի էր որ ընդհանուր արձագանք գտնէր այս ուշադրութեան արժանի կէտը, և ներկայ թէ ապագայ սերունդը ընդ միշտ ազատված կը լինի այն յուսահատութիւնից, որ զգում ենք մենք այժմ։

Աւ. Աս.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարից սկսում ենք տպագրել, որպէս նմուշ մեր բաժանորդների համար պ. Տիգրան Փիրումեանցի մի պատկեր Վասպուրականի կեանքից։ Պարոնը, ուղարկելով մեզ իր գրուածքը, մի և նոյն ժամանակ դիմել է մեզ հետևեալ նամակով։ «Դիտաւորութիւն ունենալով իմ այդ պատկերներից ժողովածու հրատարակել առանձին գրքով, տպում եմ «Մշակի» մէջ այս մի պատկերը, որպէս նմուշ ձեր ընթերցողների համար, մի և նոյն ժամանակ խնդրելով ձեզ յայտնել, որ գիրքս կը հրատարակվի բաժանորդագրութեամբ, որը սկված է արդէն։ Բաժանորդագրութիւնը 1 ռուբլի է և գիրքը բաղկացած կը լինի մօտ 400 երեսից։ Թիֆլիսում կարելի է դրվել «Կենտրոնական գրավաճառանոցում» եղբայրներիս մօտ, իսկ օտարաքաղաքացիք պէտք է ինձ դիմեն հետևեալ հասցէով. Тифлисъ, Ванкская ул., домъ Апіанца. Тиграну Пируміанцу.»

—

Թիֆլիսի փոստային և հեռագրական շրջանի գլխաւորը «Тифл. Листокъ» լրագրի խմբագրին ուղղված նամակում յայտնում է թէլաւի հաշտարար դատաւորի օգնական Ռ. Արծրունու դժբաղդ մահուան առիթով, թէ օմնիբուսի ձիաները, որոնք կատաղել և տարել էին օմնիբուսը, փոստի ձիաներ չէին, այլ դէպի Գոմբորի գնացող այդ օմնիբուսը, իր ձիաներով, մասնաւոր անձանց սեփականութիւն է։ Ուստի փոստային վարչութիւնը պատասխանատու չէ այդ ճանապարհին պատահող դժբաղդ դէպքերի համար։

—

Անդրկովկասեան երկաթուղու վագոններում գողութիւնները չեն վերջանում. նոյեմբերի մէկին կրկին տեղի ունեցաւ մի գողութեան դէպք. երրորդ կարգի վագոնում մի ռուս տիկին իր հետ տանում էր մի մափրաշ, որի մէջ կային մինչև ութ հազար ռուբլու արժողութեան թղթեր և թանգագին իրեղէններ։ Երբ գնացքը դուրս եկաւ Գանձակի կայարանից, կինը, որ մի քանի բոպէով ննջել էր, արթնացաւ և սարսափով նկատեց, որ մափրաշը վագոնում չէ և տարել են։ Այդ մասին իսկոյն հեռագրեցին Գանձակի նահանգապետին և

---

անդամ, արևը մայր մտնելուն պէս, ես այցելում էի նրան։

Յակոբան աղայի տունը եռայարկ էր, փառաւոր սենեակներով. բայց նա միշտ մնում էր վերի յարկի մի ցած սենեակում, դի սանդուղներով բարձրանալ անկարող էր։ Ահա մտնում եմ իր սենեակը. մութն արդէն պատել է այնտեղ և հազիւ է նշմարվում ծերունու ստուերը սենեակի մի անկիւնում։ Նա նստած է ծալապատիկ կամ չոքած՝ մինդարի (ներքնակի) վրա։

—Բարի երեկոյ, հաջի աղայ։

—Աստծու բարին, էֆէնդի,—լսվում է նրա քաղցը, հիւրասէր ձայնը։

Հաջի աղան ունի արդէն մասնաւոր արտօնութիւն ոտքի չելնելու ոչ մի հիւրի առաջ, դի այդ բանի համար նա պէտք ունի օգնողի։ Ցեղ եմ բռնում ծերունու կողքին, ի հարկէ ոչ աթոռի վրա,—որ այնտեղ չը կայ—այլ մինդարի։ Սենեակը ներկայացնում է ասիական հին տիպ.—հողի յատակի վրա փռված է նախ խսիր (հասիր) և ապա կապերտ. պատերի տակ շարված են մի կանգուն լայնութիւն ունեցող փոքրիկ ներքնակներ և թանձր բարձեր՝ որպէս մէջքի յենարան նստած ժամանակ։ Ուրիշ կարասիք, ինչպէս Վանայ բոլոր հին ճաշակի տների մէջ, գտնել կարելի չէ։

—Բարի՞ եկար,—ասում է նա ինձ նստելուցս յետոյ, ձեռքը տաճկական ձևով ճակատին մօտեցնելով (թամաննայ)։

Այս տաճկական բարևը լինում է զանազան տեսակ։ Երբ նա ուղղվում է բարձրաստիճան մարդոց, բարևողը պարտաւոր է այնքան խոնարհվել, որ կարողանայ ձեռքը դիպցնել դետնին ու ապա մօտեցնել իր ճակատին։ Այդ նշանակում է թէ բարևողը պատիւ է համարում իրան՝ դնել իր գլխին յարգելի անձնաւորութեան ոտաց հողը։ Երբ դիմացինը պատուաւոր մարդ է, բարևողը ձեռքը դիպցնում է նախ իր կրծքին և ապա ճակատին.—այդ նշանակում է որ նրա ծանօթը տեղ ունի իր սրտի ու գլխի վրա։ Երբ վերջապէս ողջունում են մի սիրելի ու մտերիմ էակին,—հարկաւոր է ձեռքը նախ տանել շրթունքներին և ապա ճակատին. դրանով էլ ցոյց են տալիս թէ նախ ուզում են համբուրել իրանց բարեկամին և այնպէս նստեցնել նրան գլխին։ Կայ նոյնպէս բարևի մի այլ տեսակ, որ նման է եւրոպացոց զինուորական յարգանքին (честь), թէև ոչ այնպէս կոկիկ և այդ գործ են ածում իրարու հետ նուազ ծանօթ կամ շատ ձևականութիւն չը սիրող անձինք, ինչպէս նաև այն բարձրաստիճան մարդիկ, որոնք ուզում են պատուել հասարակ մահկանացուներին իրանց ողջոյնով։ «Թամաննաները» կամ, ռամկօրէն խօսելով, «թամանդայները» միշտ կատարում են աջ ձեռքով և ինչ որ մասնաւոր դիտողութեան արժանի է, այդ այն է, որ արևելեան աղգերի մէջ բարևողը անպատճառ տարիքով, հարստութեամբ ու պատուով աւելի բարձր պէտք է լինի բարև «ընդունողից»։ Իսկ եւրոպական «ձեռք սեղմելը» այնտեղ իրերի կարգումը չէ։ Հայերը միայն սովորութիւն ունեն անել այդ կրօնական մեծ տօները շնորհաւորելիս։

—Բարի՞ տեսանք, հաջի աղայ,—պատասխանում եմ նրան—ինչպէս ես, աղէկ ես։

—Աղէկ եմ, գեօյ.... ոտքերէս շատ եմ թուլցէ, վարժապետ. ջորով (հազիւ) ձի կը հեծնեմ, որ ժամ երթամ.... «Տէր, դիր պահապան բերանոյ իմոյ»..... Քանի՞ դիր խնդրեցի, որ ուժէս ընկնելէ յետոյ էլ կեանք չունենամ.... Բայց օրհնեալ է կամք Տեառն»....

Ամենայն երկիւղածութեամբ այդ խօսքերը արտասանելուց յետոյ, նա կախեց իր գլուխը և սուզվեցաւ մտածումների մէջ։

—Հաջի աղայ, ասեցի ես բոպէական լռութիւնից յետոյ, դու արդէն տանդ մէջ բոլոր կրօնական գրքերը կը կարդաս. կարելի չէ՞ որ միայն կիրակի օրերը ժամ երթաս։

Ի պատասխան այդ առաջարկութեան, ծերունին ձգեց վրաս մի ցաւալի հայեացք միայն։ Ես այդ կարծիքը յայտնեցի նրան մանաւանդ այն պատճառով, դի տեղեկացած էի որ նա ոչ թէ միայն «ջորով» է ձի հեծնում, այլ նրան գրկելով հեծացնում են և տան երկու մշակներն էլ թևերը բռնած՝ մեղմ քայլերով ձին քշում, դի այլապէս նա ձիուց վայր կընկներ....

—Ցուր ես տանեմ, տուր ես տանեմ,—լսվեցաւ բակից փոքրիկ տղաների վէճը և յանկարծ դուռը բացվելով, ներս մտան տասի չափ մանր մանչեր ու աղջիկներ, որոնցից ամենափոքրը բռնած ունէր ձեռքին մի վառած ճրագ, այսինքն խեցեղէն ամանով ձէթ ու պատրոյգ։ Ճրագը նշանակեալ տեղը դնելուց յետոյ տղաները ամենայն ակնածութեամբ մօտեցան մի առ մի հաջի աղային և աջն համբուրելով, ինձ ևս տաճկական թամաննա արին։ Դրանք հաջի աղայի եղբօր թոռներն էին։

Ճրագն ու տղաների ներկայութիւնը ի հարկէ մի փոքր կենդանութիւն տուին սենեակին և մենք մօտ հինգ բոպէ զբաղվեցանք նրանց հետ։

—Ի՞նեղութեան իմում ես առ Տէր կարդացէ և առ Աստուած իմ աղաղակեցի»,—մրմնջաց հաջի աղան, դժուարութեամբ իր նստած դիրքը փոխելով։

Մեր խօսակցութիւնը առհասարակ պաղ էր անցնում, դի պէտք է ասած որ հաջի Ստեփան աղան սիրող չէր աստիճանական և մանր մունը զրուցատրութեանց։ Նա չէր հետաքրքրվում նոյնպէս «նոր լուրերով»։ Հաջի աղան, ինչպէս դրեթէ բոլոր հին մարդիկ, մեծ հաճութիւն էր զգում իր անցեալ կեանքի դէպքերի և իր տեսած մեծ մարդոց գովեստները անելուց։ Այդ է գրեթէ բոլոր հին մարդոց թոյլ կողմը և ով որ կուզի անձնձրոյթ նրանց հետ երկար ժամեր անցկացնել, պէտք է անպատճառ սիրահար լինի հնութեանց։

—Հաջի աղա, քանի՞ տարի կայ լուսահոգի Գաբրիէլ սրբազանի մահը,—հարցրի ես դիւանագէտի մը արտաքին պարզութեամբ։

—Կայ քսան, քսանը հինգ տարի.... Գաբրիէլ սրբազան.... հայ գիդի դիւնեա (աշխարհ).... հըրամանքդ անոր պատմութիւնը լսե՞ր ես,—դարձաւ նա դէպի ինձ մի առանձին ոգևորութեամբ։

—Քիչ մը։ Կամեն չատ արդար մարդ էր։

—Էնպէս առաջնորդ Վան ոչ եկած է և ոչ պիտի դայ։ Լուսահոգին քառասուն տարի Լիմայ վանահայր էր։ Էն որ կերթայ ս. Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրվելու, լուսահոգի Ներսէս Կաթողիկոսը կասի թէ «Որդեակ Գաբրիէլ, դու իմ հայրն ես, հայր Գաբրիէլն ես.... որքան էլ առաջս չոքած օրհնութիւնս կընդունիս, իմացիր որ իմ հայրն ես.... Դու որ քառասուն տարի 50 միաբան կրցար խաղաղութեամբ կառավարել—որ աշխարհի ամենէն դժուար բանն է—արժանի ես Վասպուրականն էլ կառավարելու. օրհնեալ լինիս, հայր Գաբրիէլ, բայց եթէ լսես որ մի օր Ախթամարայ կաթողիկոս ես դարձեր,—պիտի նզովեմ քեզ, հայր Գաբրիէլ»....

—«Կ'երդնում ս. կարդովդ առաջի վեհափառութեանդ և Աստուծոյ, որ անարժանս երբէք պիտի չը բաղմիմ այդ հեստեալ ու նզովեալ Ախթոռը»—կասի լուսահոգին ու կը հեծկլտայ սաւայ (կաթնակեր) տղու պէս....

—Կատարեց այդ երդումը,—հարցրի ես անհամբեր։

—Ինչպէ՞ս չէ, ինչպէ՞ս չէ։ Քանի մի տարիէն յետոյ Ախթամար խռովութիւններ եղան։ Ստամբոլայ պատրիարքը կոնդակ էօրօխկեց (ուղարկեց) որ նա երթայ իբրև քննիչ։ Լուսահոգին հնազանդ մարդ էր, էֆէնդի, գնա՞ց։ Բայց երբ կաթողիկոս ուզեցին զինքն ընտրել, պատրիարքին աղերսանայ գիր գրեց, որ զինքը այդ մեղքէն ազատէ և իր, ս. Էջմիածնայ մէջ տուած ուխտը յարգէ.... Նա էսպէս մարդ էր, էֆէնդի։

(Կը շարունակվի)

ոստիկանապետին։ Սկսվել են խուզարկութիւնները, և ինչպէս հաղորդում ռուս լրագիրները, թէև մափրաչը գտնված է մի թուրքի մօտ, բայց առանց իրեղէնների, որոնց գտնելը շատ կասկածելի է։

—

Կիրակի, 8-ին նոյեմբերի, հանգուցեալ Կիպլինիի մարմինը բերվեցաւ Թիֆլիս և կատարվեցաւ նրա թաղումը Սուրբ Դաւիթի սարի վրա գտնվող վանքի պարիսպում։

—

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են, որ նոյեմբերի 1-ին այդտեղ կանչվեցան այն բոլոր անձինք, որոնք զինուորագրական ցուցակների մէջ նշանակված են։ Նոյեմբերի 4-ին կանչվածները վիճակ հանեցին, և նրանք, որոնց վիճակը ընկել էր, արդէն ուղարկվեցան Բագու։ Ցանձնաժողովին, որ Բաքուից Ղուբա էր եկել, նախագահում էր պ. Լէբէդեվ։

—

Մեզ խնդրում են տպել հետևեալ նկատողութիւնը. «Հայոց դպրոցների բացումից յետոյ, և մանաւանդ երբ լոյս տեսաւ այդ դպրոցների մասին կազմած և Էջմիածնում տպած ծրագիրը, շատերը սկսեցին զանազան առարկաների դասագրքեր կազմել, և որ ամենագլխաւորն է, իրանց գրքերը վաճառելու համար, ամեն միջոցների դիմեցին, ապացուցանելով որ իրանց գիրքը հաւանութիւն է գտել Էջմիածնում։ Թէ որքան արժանաւոր են այս դասագրքերը, այդ մասին կրկին անգամ խօսել աւելորդ է, գրանից մի քանիսի մասին իր ժամանակին տպված են քանի մի նկատողութիւններ «Մշակի» մէջ։ Վարժապետների գանգատները ցոյց են տալիս, որ այդ յանձնարարված գրքերը շատ մեծ պակասութիւններ և անյարմարութիւններ ունեն, ինչպէս օրինակ այն գրքերը, որոնք կազմված են կրօնի դասաւանութեան համար։ Բայց չը նայած դրան, ստիպում են վարժապետներին այդ գրքերը գործածել։ Գաւառական մի քանի քաղաքներում, օրինակի համար, հոգևոր կառավարութիւնները ստիպում են աշակերտների վրա վաճառել կրօնի երկու դասագրքեր։ Վարժապետները յայտնում են, որ աշակերտները արդէն գնել են այդ յանձնարարված կրօնի մի դասագիրքը, բայց չը նայած դրան՝ պահանջում են, որ գնեն և միւսը։ Ի՞նչ կը նշանակէ այդ բանը։ Ցանկալի է, որ այդ տեսակ տգեղ երևոյթները վերջանան։»

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՑԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

—

Պոլսից եկած տեղեկութիւնները հաստատում են որ հայոց պատրիարքի հրաժարականը մեծ աղմուկ է գցել Թիւրքաց շրջաններում և մեծ շարժում է առաջ բերել Պոլսի հայերի մէջ։ Պոլսի հայոց եկեղեցականութիւնը այդ առիթով մի շնորհակալութեան գիր է ներկայացրել Պատրիարքին, հոկտեմբերի 29-ին, մի առանձին պատգամաւորութեան ձեռքով՝ որին առաջնորդել է պատրիարքական փոխանորդ հայրը։ Պատրիարքը շնորհակալութիւն յայտնելով այդ ցոյցի համար, ասել է, որ ինքը միայն իր պարտքն է կատարել, քանի որ նոյն իսկ Սուլթանի կամքն է, որ իր հպատակ ժողովրդեան դարևոր իրաւունքները ոտնակոխ չը լինեն։ Պատրիարքը նոյն միտքն է յայտնել և իրան դիմող ուրիշ բարձրաստիճան անձանց, կրկնելով, որ այսպիսի պարագաների մէջ ինքը անկարող է յետ առնել իր հրաժարականը։ Պատրիարքի հրաժարականին իրանց համակրութիւնը յայտնելու համար, Պոլսի եկեղեցականները պատրաստել են մի հանրագիր պատրիարքին ներկայացնելու համար։ Հանրագրի բովանդակութիւնը հետևեալն է։

Ամենապատիւ Տ. Տ. Ցարութիւն Սրբազան Արքեպիսկոպոս Աղգանամ Պատրիարք մեր և Հայր Հոգևոր.

Ձեր բարձր Սրբազնութեան արժանեօք հաստատութենէն ի վեր յԱթոռ Պատրիարքութեան Կ. Պոլսոյ, մեր աղգային և եկեղեցական կանոնաց և օրէնսդրութեանց անվթար պահպանութեան համար ունեցած խնամքն ու հոգատարութիւնն՝ ակներև լինելով, բոլոր հայ աղգին խորին երախտագիտութիւնը դրաւած էր իրաւամբ։ Բայց այս օրերս պատահած արտաքոյ կարգի պարագայից մէջ՝ որ վտանգ կը սպառնային մեր քրիստոնէական սուրբ կրօնին հիմը խախտելու, և մեր Աղգային իրաւունքն ու արտօնութիւնքը կործանելու, ձեր սրբազնութեան արիական ջանքը և պահպանողական դիրքը, մեր ամենուս աքանչացման և գոհունակութեան նորանոր առիթ ընծայած է։ Վասն որոյ՝ կուգամք, Սրբազան Տէր, խորին համակրութեամբ մեր անհուն շնորհակալութիւնը մատուցանել ձեր հովուապետական արթուն և աչալուրջ խնամոց, ի դիմաց մեր՝ և Ժողովրդեան մերում, որ հաւատարիմ հպատակներ լինելով Օսմանեան մեծազօր կայսրութեան, միշտ աղօթող ենք նորա անուան յարատևութեան համար։ Դուք, Սրբազան Տէր, Հայ աղգիս առ Օսմանեան գահն ունեցած խոնարհ և հաւատարիմ հպատակութեան սէրը յայտնեցիք ամեն պարագայի մէջ՝ ամեն ունայն կարծեաց և թշնամութեանց դէմ, և մեք ինչպէս անբաժան լինելով այդ դարաւոր հաւատարմութենէն, ըստ ամենայնի կամակից եղած ենք Ձեզ աղգովին, նոյնպէս և այժմ Ձեր արդար բողոքանաց և դիտողութեանց, բոլոր սրտիւ ձայնակից և զգայակից ենք ի պաշտպանութիւն մեր աղգային իրաւանց և արտօնութեանց։ Ուստի խորին ակնածութեամբ կաղաչեմք և կը պաղատիմք Սրբազան Հայր մեր Հոգևոր, որ առանց Ձեր հրաժարման վրայ պնդելու, մինչև ցվերջ պաշտպան կանգնիք մեր քրիստոնէական սուրբ հաւատոյ դէմ եղած այն ամեն քմահաճոյ դժուարութեանց և խոչնդոտներու, որք հակառակ են մեր Օգոստափառ Վեհապետին Սուլթան-Ապտիւլ-Համիտ-խան բարեգութ կայսեր կամաց, և իւր բարեյիշատակ նախնեաց շնորհած ու հաստատած արտօնութեանց։ Մեք ի մեր հաւատոյ ուսեալ, միշտ կաղօթեմք առ Ամենակալն Աստուած, Թագաւոր Թագաւորաց, որ յաւիտեան պահպանէ զմեր խաղաղարար և բարեսէր Թագաւոր կայսրն Սուլթան-Ապտիւլ-Համիտ-խան Բ. հանդերձ օգոստափառ որդւովք և զարմաք։ Ամէն։ Վերստին կաղաչեմք, Սրբազան Տէր, որ Թարգման կանգնիք առաջի Աթոռոյ նորին կայսերական մեծափառութեան, ինչպէս մեր աղերսանաց ի պահպանութիւն օրինաց քրիստոնէական կրօնի մերում, նոյնպէս և մեր բարեմաղթութեանց և ամենահաւատարիմ հպատակութեան։

Բացի դրանից աղգային երեսփոխանները իրանց կողմից մի ուրիշ հանրագիր են պատրաստում, որով ուզում են յայտարարել որ քաղաքական ժողովի ընտրութիւնը միանգամայն սահմանադրական է, և նորընտիր ժողովի վրա երեսփոխանութիւնը կատարեալ վստահութիւն ունի։ Կրօնական ժողովը նիստ գումարելով յայտնել է իր համերաշխութիւնը պատրիարքի հրաժարականի և յիշատակագրի վերաբերմամբ։

Պոլսից եկած վերջին տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Մեծ-Եպարքոսը ստանալով Ցարութիւն պատրիարքի հրաժարականը և նրան կցած յիշատակագիրը, պաշտօնապէս մանրամասն տեղեկութիւններ է պահանջել դատական նախարարից այն պատճառների մասին, որոնք տեղի են տուել հայոց պատրիարքի հրաժարականին։

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ռուսաց Թագաւոր Կայսրի և գերմանացոց Վիլհելմ կայսրի տեսակցութեանը գերմանական մամուլի մի մասը զլխաւորապէս քաղաքական նշանակութիւն է տալիս։ «Post» լրագիրը հաղորդում է իբրև հաստատ տեղեկութիւն, որ այդ տեսակցութեանը ներկայ կը լինի և իշխան Բիսմարկ, իսկ ռուսաց արտաքին գործերի մինիստր Գիրս պէտք է ներկայացնի մի ընդարձակ զեկուցում Նորին Կայսերական Մեծութեանը քաղաքական գործերի ընդհանուր դրութեան մասին։

—Կ. Պոլսից հեռագրում են «Polit. Corresp.» լրագրին. «Հայոց պատրիարքի եռանդուն ընթացքը, որը արտայայտվեցաւ նրա հրաժարականի մէջ, հայ շրջաններում ընդհանուր համակրութիւն է գտել։ Սպասում են, որ Թիւրքաց կառավարութիւնը այդ ճգնաժամի առաջն առնելու համար կը կարդադրի հայոց խնդիրը։

—Եւրոպական լրագիրները կրկին իբրև լուր հաղորդում են, որ ֆրանսիական հանրապետութեան նախագահ Գրէվի ցանկանում է հրաժարական տալ այդ պաշտօնից։

—Բերլինի լրագիրները հաղորդում են, որ գերմանական կառավարութիւնը վճռել է, որ Ռուսաստանից Պրուսիա եկողները պէտք է անցագիր ստանան Պետերբուրգի գերմանական դեսպանատնից։ Հակառակ դէպքում կարգելվի Պրուսիայով անցնելը։

—Գերմանական ժողովրդական մինիստրութիւնը սրանից մի քանի ժամանակ առաջ կարգադրութիւն էր արել, որ ժողովրդական դպրոցների ուսուցիչները չը դիմեն որ և է տեղ հաւաքական խնդրագրերով։ Այդ տարօրինակ կարգադրութիւնը աղմուկ է գցել ժողովրդական դպրոցների վարժապետների մէջ, որոնք բողոքում են այդ կարգադրութեան դէմ, հիմնվելով նոյն իսկ սահմանադրութեան յօդուածների վրա, որոնք թոյլ են տալիս իւրաքանչիւր քաղաքացուն աղատ կերպով յայտնելու իր կարծիքները, և ժողովներ գումարել քաղաքական և մասնագիտական զանազան հարցեր քննելու համար։

—Պոլսից հեռագրում են, որ Թիւրքաց կառավարութիւնը զօրք է ուղարկում դէպի Սերբիայի սահմանները։

—Ֆրանսիական հանրապետութեան նախագահի ենթադրած հրաժարականի առիթով Փարիզից գրում են, որ իբրև թէ մի քանի շրջաններում արդէն խօսում են այն մասին, թէ ով կարող է ստանձնել այդ բարձր պաշտօնը՝ Գրէվիից յետոյ։ «Figaro» լրագիրը յայտնում է, որ այդ պաշտօնի համար Ֆլուրանսի թեկնածութիւնը համակրութիւն կը գտնի։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Դիտողական և նկատողական մեթոդի պաշտպան և կողմնակից հայ վարժապետը դասատան մէջ կանգնած ուղում է բացատրել իր աշակերտներին, թէ ինչ է ձմեռ և ամառ։

—Մ. ասում է նկատողական մեթոդի կողմնակից մանկավարժը, դիմելով աշակերտներից մէկին, դուրս եկ և կանգնիր պատուհանի մօտ։ Աշակերտը կատարում է վարժապետի կամքը։

—Գիտէք ինչ է ձմեռ, ասում է ուսուցիչը, դառնալով աշակերտներին։ Մ. բաց արա պատուհանը։

Աշակերտ Մ—ենը զարմանքով բաց է անում պատուհանը քանի որ գիտէ որ դուրսը շատ ցուրտ է և ձիւն։

—Ասա ինձ, ինչ ես զգում։

—Ցուրտ է, պարոն վարժապետ։

—Ա՛յ, դրան ասում ենք ձմեռ։

—Այժմ գնա և ձեռքդ դիր վառարանի մէջ. Մ. գնում և ձեռքը դնում է վառած վառարանի մէջ։

—Ի՞նչ ես զգում, հարցնում է ինքնագոհ կերպով մանկավարժը։

—Տաք է, պարոն վարժապետ....

—Ա՛յ, դրան էլ ասում ենք ամառ։ Հասկացար։

—Իսկ աչունը և գարունը ի՞նչ է, պարոն վարժապետ, հարցրին մի քանի աշխոյժ աշակերտներ։

—Հ՛ը... այդ, մասին միւս անգամ կը պատմեմ, նստեցէք։

* * *

Սարատովի դատարանում նորերս պատահել է հետևեալ դէպքը։—Մի երիտասարդ մեղադրվում էր դողութեան մէջ. նա գողացել էր մի կով։ Պաշտպանվելու համար նա դիմեց մի փաստաբանի։ Փաստաբանը համաձայնվեց նրան պաշտպանել և պահանջեց 75 ռուբլի վարձատրութիւն։ Վերջապէս հասաւ դատաստանի օրը։ Մեղադրվողը դատարան եկաւ պահապանների հսկողութեան ներքոյ։ Նիստը բանալով նախագահը դիմեց մեղադրվողին և ասեց.

—Ինչու դուք այժմ պահապանների հսկողութեան ներքոյ էք։

—Որովհետև գողութեան մէջ եմ բռնված, պատասխանեց մեղադրվողը։

—Ինչպէս, զարմանքով գոչեց նախագահը, դուք դեռ ևս չէք արդարացել մի գողութեան մէջ, և արդէն երկրորդ անգամ գողութիւն արեցիք։

—Ուրիշ ինչպէս անէի, ձերդ գերազանցութիւն, ասեց մեղադրվողը, տեսնում էք իմ պարոն փաստաբանին, նա ինձանից պահանջում է 75 ռուբլի, որտեղից գտնէի ես այդ գումարը...

## „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՀԻՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի։ Փոխ-ծովապետ Շմիդտ նշանակված է Խաղաղ-ովկիանոսի զօրաբաժնի գլխաւոր, նոյն ովկիանոսի նաւատորմի հրամանատար կօրնիլօվի փոխարէն։ «Гражданинъ» լրագիրը հաղորդում է, որ նոյեմբերի 2-ին պետական խորհուրդը հաստատեց նորերումս քննված և բաւական փոփոխութիւնների ենթարկված մաքսային տուրքը։ Լրագիրները հաղորդում են, որ կարտոֆելի-օսլային արդիւնաբերութիւնը զարգացնելու համար մի շարք միջոցներ են ուղում ձեռք առնել, ի միջի այլոց մատրութիւն կայ արտահանութեան համար պրեմիաներ և հովանաւորութեան տուրքեր տալ։

ԲԷԼԳՐԱԴ, 6 նոյեմբերի։ Միտրոպոլիտ Միքայէլին նշանակված է տարեկան 10,000 ֆրանկ կենսաթոշակ։

ՓԱՐԻԶ, 6 նոյեմբերի։ Սպասածին հակառակ, երէկվայ օրը անցաւ խաղաղ կերպով։ Վիլսոնի դէմ դատաստանական հետախուզութիւն սկսելու վերաբերեալ վճիռը հաստատվեցաւ 527 ձայների առաւելութեամբ ընդդէմ 3-ի։ Չը նայած դրան բոլոր այն լուրերը, որոնք վերաբերում են ոչ թէ միայն նախագահի, այլ և մինիստրութեան հրաժարականին, եռանդուն կերպով հերքվում են։ Գրէվի յայտնեց մինիստրներին, որ ինքն հրաժարական չի տայ, իսկ մինիստրութիւնը վճռեց իր պաշտօնի մէջ մնալ մինչև որ պատգամաւորների ժողովի մեծամասնութիւնը կը սկսի իրան հակառակել։ Միայն արդարադատութեան մինիստր Մազօ հրաժարական տուեց։ Նրան յաջորդ դեռ չէ նշանակված։ Ոստիկանութեան պրէֆէկտ Գրանիօն վերջնականապէս արձակված է և ինչպէս նա, նոյնպէս և հետախուզիչ բաժնի գլխաւորի օգնական Գարոն, այլ և Վիլսոնի քարտուղարը դատաստանի կենթարկվին։ Վաղը ժողովի մէջ տեղի կունենան ծայրահեղ ձախակողմեանների հարցապնդումները, որոնք կարող են կերպարանափոխել իրերի դրութիւնը։

ԲԵՐԼԻՆ, 6 նոյեմբերի, առաւօտեան 10 ժամ 40 րոպէին։ Վիլհելմ կայսրը այս րոպէին ուղևորվում է ռուսաց դեսպանատան ապարանքը։

ԲԵՐԼԻՆ, 6 նոյեմբերի։ Առաւօտեան 10 ժամ 10 րոպէին «Unter den Linden» փողոցի վրա և Բրանդէնբուրգեան դռների մօտ կանգնած է ժողովրդի ահագին բազմութիւն, սպասելով Նոցա Մեծութիւնների թագաւոր Կայսրի և թագուհի Կայսրուհու գալստեանը։ Ցանուն Ալէքսանդրի կազմված գվարդիայի զօրաբաժինը հանդիսաւոր զգեստով այս րոպէիս կանգնեցրած է Ալղենի փողոցի վրա իրան յատկացրած տեղում։ Կայարանում պատուաւոր պահնակազնդի մէջ կը լինի երկրորդ գվարդիայի գնդի մի զօրաբաժինը, նուագածուների խմբով և դրօշակով։ Կայարան եկան՝ պրինց Վիլհելմ, գեներալների ամբողջ կազմը և կոմս Մոլտկէ։ Նոցա Մեծութիւնները տեղ հասան 11 ժամին։ Թագաւոր Կայսրը պրինց Վիլհելմի հետ ուղևորվեցան բաց կառքով, իսկ թագուհի Կայսրուհին պրինցի ամուսնու հետ՝ ծածկած կառքով։ Դեսպանատան ապարանքը հասած ժամանակ Նոցա Մեծութիւններին ողջունեցին Վիլհելմ կայսրը և պրինցները։ Դրանից յետոյ Կայսրը այցելեց Վիլհելմ կայսրին և պրինցներին։ Թագուհին նոյնպէս մի քանի այցելութիւններ արեց։ Ժամը 4-ին եկաւ դեսպանատան ապարանքը Կայսրի մօտ իշխան Բիսմարկ և մնաց Նորին Մեծութեան մօտ մօտաւորապէս մի ժամ։ Թագուհին Օգոստափառ Երեխաների հետ միասին այցելեց Վիլհելմ կայսրին։ Հանդիսաւոր ճաշը պատրաստված է 98 անձանց համար։ Նոցա Մեծութիւնների ուղևորութիւնը նշանակված է երեկոյեան $9^1/_2$ ժամին։

ԲԵՐԼԻՆ, 7 նոյեմբերի։ Ռուսաց Կայսերական Զոյգը՝ մնաս բարև ասելով Վիլհելմ կայսրին, երէկ երեկոյեան 9 ժամ 35 րոպէին դուրս գնաց Բերլինից։ Վիլհելմ, Հէնրիխ, Ալբրէխտ և Լէոպոլդ պրինցները ուղեկցում էին Օգոստափառ ճանապարհորդներին մինչև Պոտսդամ։

ՓԱՐԻԶ, 7 նոյեմբերի։ Սան-Բէմոից ստացված հեռագիրը հաղորդում է, որ գերմանական թագաժառանգի դրութիւնը աւելի վատացել է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 նոյեմբերի։ Սարատով-Սիմբիրսկի բանկի գործը սենատի մէջ կը քննվի դեկտեմբերի 1-ին։

ՓԱՐԻԶ, 7 նոյեմբերի։ Ձախակողմեանները ազդարարված հարցապնդում արեցին կառավարութեանը։ Բուվիէ պահանջեց, որ այդ հարցապնդումի քննութիւնը յետաձգվի մինչև նոյեմբերի 24-ը, և իր կողմից ներկայացրեց ուրիշ հարցմունք. բայց Կլէմանսօի ճառից յետոյ, որով նա ապացուցանում էր, որ աւելի ուշացնել չէ կարելի և բացատրութիւնները անհրաժեշտ են, պալատը 328 ձայների մեծամասնութեամբ ընդդէմ 242-ի մերժեց մինիստրի պահանջը։ Այն ժամանակ Բուվիէ յայտնեց, որ մինիստրութիւնը հրաժարական է տալիս։

ԲԵՐԼԻՆ, 7 նոյեմբերի։ Ռուսաց դեսպան կոմս Շուվալօվին շնորհված է Սև Արծուի շքանշանը։

ՍՕՖԻԱ, 7 նոյեմբերի։ Ստամբուլօվ հրամայեց ձերբակալել սերբական հիւպատոսարանի մի ծառայողին, պատճառաբանելով որ նա յարաբերութիւն ունի ընդդիմադրականների հետ, բայց հիւպատոսի բողոքելով այդ ծառայողը ազատվեցաւ։ Հիւպատոսը պահանջեց քննել այդ գործը։

ՀԱՄԲՈՒՐԳ, 7 նոյեմբերի։ Այստեղ ձերբակալվեցան 60 սոցիալիստներ։

ՓԱՐԻԶ, 8 նոյեմբերի։ Նախագահ Գրէվի ընդունեց մինիստրութեան հրաժարականը, և առաջարկեց նրան վարել ընթացիկ գործերը մինչև նոր մինիստրութեան նշանակելը։ Դրանից յետոյ Գրէվի իր մօտ կանչեց Ֆրէյսինէին։ Շփոթված դրութիւն է։

ԲԵՐԼԻՆ, 8 նոյեմբերի։ Երէկ կէսօրին կոմս

Շուվալով ներկայացաւ Վիլհելմ կայսրին։ Կոմս Շուվալով այժմեան օտարերկրացի դեսպաններից առաջինն է, որին չնորհվում է Սն Անդրէի շքանշանը։ Հաղորդում են, որ երէկ պալատում այդ շքանշանի ոչ մի հատը չը կար, որի պատճառով հարկաւոր եղաւ շտապով պատրաստել պատրաստելու համար։ Շքանշանը հասցրին Վիլհելմ կայսրին հանդիսաւոր ճաշի ժամանակ, որը և յանձնեց կոմս Շուվալովին ճաշից յետոյ տեղի ունեցած ժողովի ժամանակ։ «Հիւսիսային դերմանական լրագիրը» ասում է, որ տնտեսական դժուարութիւնները չեն կարող դժգոհութիւն ծագեցնել բարեկամ ժողովուրդների մէջ։ Գերմանիայի և Ռուսաստանի մէջ եղել են աւելի վատ տնտեսական հանգամանքներ, բայց դրանք չեն ազդել քաղաքական համերաշխութեան վրա։

ՓԱՐԻԶ, 8 Նոյեմբերի։ Գրեվի յոյս ունի, որ իրան կը յաջողվի կազմակերպել նոր մինիստրութիւն. իսկ եթէ կը պատահեն չը նախատեսված դժուարութիւններ, այն ժամանակ նա կը պահանջի սենատից լուծել պատգամաւորների ժողովը. և եթէ սենատը այդ կը մերժի, այն ժամանակ ինքն հրաժարական կը տայ։ Դրա հետ միասին Գրեվին կը հաղորդի երկրին, պարլամենտին ուղղած հաղորդագրութեան մէջ իր կարծիքը այժմեան դրութեան և դրա պատճառների մասին, այլ և այն հետեւանքների մասին, որոնք կարող են տեղի ունենալ։ Փարիզը կատարելապէս խաղաղ է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 Նոյեմբերի։ Նոցա Կայսերական Մեծութիւնները, Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհին, Օդոստափառ Զաւակներով, բարեհաճեցան Գատչինո վերադառնալ արտասահմանեան ճանապարհորդութիւնից, երէկ, 3 ժամին կէսօրից յետոյ։

ԹԷՀՐԱՆ, 9 Նոյեմբերի։ Շահի ճանապարհորդութիւնը դէպի Եւրոպա, յետաձգված է 1889 թ-ին։

ՓԱՐԻԶ, 9 Նոյեմբերի։ Գրէվի կանչեց իր մօտ ձախակողմեան կուսակցութեան առաջնորդ Կլէմանսօին։ Բոլոր հանրապետական կուսակցութիւնների ենթադրված ընդհանուր ժողովը, ըստ երևոյթին, կայանալու չէ, հանրապետականների միմեանց մէջ տեղի ունեցած երկպառակութեան պատճառով։

ՍՕՖԻԱ, 9 Նոյեմբերի։ Սերբիական հիւպատոսարանի ծառայողի կալանաւորման գործի առիթով, բուլգարական կառավարութիւնը ներողութիւն խնդրեց սերբիական հիւպատոսից, յայտնելով, որ ծառայողը սխալմամբ էր ձերբակալվել։ Բոյանովի իր հրոսակի մնացորդներով, հեռացաւ Թիւրքիա, որտեղ նրանց զինաթափ արեցին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 6-ին

| | | | |
|---|---|---|---|
| Ռուսաց 1 տուրվ. Լոնդոնի վրա արժէ | $21^3/_8$ | պենս. | |
| — — Համբուրգի վրա — | $179^1/_2$ | պֆ. | |
| — — Փարիզի վրա — | $223^3/_4$ | սանտ. | |
| Ոսկի — արժէ — . . | 9 | » | 5 կ. |
| Մաքսային կուպոններ — . . | 180 | » | 1/4 » |
| Արծաթ — — — . . . | 1 | » | 32 » |
| Բորսային դիսկոնտներ — . . | $5^3/_4$ և | » | 7% » |
| Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի | 99 | » | 62 » |
| — — — — 2-րդ — | 97 | » | 50 » |
| — — — — 3-րդ — | 97 | » | 50 » |
| — — — — 4-րդ — | 97 | » | 50 » |
| — — — — 5-րդ — | 97 | » | 50 » |
| — — — — 6-րդ — | — | » | — » |
| Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ. | 96 | » | 25 » |
| — — 2-րդ — | 96 | » | 37 » |
| — — 3-րդ — | 96 | » | 50 » |
| Ներքին 5% առաջին փոխառութ. | 259 | » | — » |
| — երկրորդ — | 235 | » | — » |
| $5^1/_2$% բէնտա . . . . . | 102 | » | — » |
| Ոսկեայ բէնտա . . . . . | 193 | » | — » |
| Եօթերորդ կոնսոլիդած փոխառութիւն . . . . . | 160 | » | — » |
| Նոր երկաթուղային բէնտա . . . | 97 | » | 25 » |
| 5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ. . . . . | 167 | » | 50 » |
| Գրաւ. թղ. Ազնվ. բանկի . . . | 97 | » | 50 » |
| $5^1/_2$% գրաւական թղթեր խերսոնի կալուած բանկի. . . . . | 97 | » | 25 » |
| 6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան. | 101 | » | — » |
| — — Պոլտավայի — — | 101 | » | — » |
| — — Պետ. Ցուլսկ. — — | 101 | » | — » |
| — — Կիևի — — | 101 | » | — » |
| — — Մոսկվայի — — | 101 | » | — » |
| — — Բեսարաբ. Ցավր. — | 101 | » | — » |
| — — Նիժ. Սամար. — | 101 | » | — » |
| — — Վիլնայի — | 101 | » | — » |
| — — Թիֆլիսի—27 և 43 տ. | 98 | » | 50 » |
| — —Բուենոս-Այրեսի-18 և 43 տ. | 99 | » | — » |
| Վոլժսկո-Կամսկի բանկի ակցիաները | 677 | » | — » |
| Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ. | 252 | » | — » |
| Ռիբինսկ-Վոլգայի ընկ. . . . . | 78 | » | 50 » |
| Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ. . . . . | 93 | » | 25 » |
| Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ . | 93 | » | 50 » |
| Օդէսայի — — . | 93 | » | 25 » |
| Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. . | 83 | » | — » |
| Նոր փոխառութիւն. . . . . | 81 | » | 50 » |

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամրանում է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆՑԻ

(կուկիա, վօրոնցովի արձանի հանդէպ)

*Հիւանդներին ընդունում են ամեն օր*

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.
*Կին-բժիշկ* ԻՍԱՀԱԿԵԱՆՑ 11—12 ժ. կանանց և երեխայոց ց.
ԲԷՆԿԷՎՍԿԻ—11—12 ժ. ականջների, կոկորդի, սիֆիլիսի և ատամների ց.
Ա. ԳՈՒՐԿՈ—12—1 ժ. աչքի, ներքին և մանկական ց.
ԱՐՏԵՄԻԵՎ—12—1 ժ. երեքշաբթի և ուրբաթ, կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց ց. ամեն օր, բացի երեքշաբթի և ուրբաթ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

ԶԱԵՎՍԿԻ—5—7 ժ. ջրային ց. և էլեկտրօ-տերապիա.
ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց ց.
*Հիւանդանոցումն է մանկաբարձուհի* Մ ո զ ե ր։
Վճար—50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) համար համաձայնութեամբ։ Մշտական անկողիններ.

*Հիւանդանոցի փոխ-վերատեսուչ* ԲՈՒԴԿՕՎՍԿԻ

Новая Книга
ОПЫТЫ ПРАКТИЧЕСКОЙ ХИМІИ
Составилъ *П. Шишло*
С.-Петербургъ 1887
Цѣна экз. 50 к.
Требованія просятъ адресовать на имя автора; Владикавказъ, Пробиреру Владикавк. Пробирной Палатки Павлу Фомичу Шишло. Книгопродавцы пользуются уступкою. 1—2

Լ. Բ. ԹԻԴԴԻԿԵԼԻ
ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ
(Գոլովինսկի պրոսպէկտի վրա, Ալէքսանդրեան այգու մօտ) ընդունում է ստորագրութիւն 1888 թվին հրատարակվելի բոլոր պարբերական հրատարակութիւնների համար, *խմբագրական դնեռով։* 6—15

ОТКРЫТА ПОДПИСКА НА ЖУРНАЛЪ ПОПУЛЯРНОЙ МЕДИЦИНЫ И ГИГІЕНЫ

„МЕДИЦИНСКАЯ БЕСѢДА“

„Медицинская Бесѣда“ имѣетъ цѣлью знакомить общество черезъ посредство общедоступныхъ (популярныхъ) статей съ современнымъ направленіемъ врачебной науки и съ желательною постановкою врачебнаго дѣла. Земскіе санитарно-медицинскіе вопросы, статьи по общественной и частной гигіенѣ, популярныя статьи по различнымъ отраслямъ врачебной науки, школьная гигіена, аптечное дѣло, статьи по различнымъ отраслямъ естествознанія, врачебныя замѣтки и хроника, библіографія, историческія свѣдѣнія и замѣтки—*вотъ основная часть программы журнала.* „Медицинская Бесѣда“, имѣя разностороннюю, обширную программу, будетъ служить, какъ и въ прошедшемъ году, *въ одинаковой степени интересамъ врачей и публики.* Журналъ выходитъ два раза въ мѣсяцъ. Цѣна за годъ съ пересылкой 4 р. 50 к., за полъ года—3 р. *Подписка* на 1888 годъ *принимается въ г. Воронежѣ, въ конторѣ редакціи.*

Редакторъ—издатель **А. Х. Сабининъ.**

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ *յայտնում է գիտութիւն ընկերութեան յարգելի Անդամներին, որ սոյն Նոյեմբերի 15-ին, առաւօտեան 11 ժամին, տեղի կունենայ Դումայի դահլիճում ընկերութեան ընդհանուր ժողովը ընտրելու համար։*

1) Ընդհանուր ժողովի նախագահ և քարտուղար, խորհրդի 4 անդամ և 5 փոխանդամ։ 2) 1886 թուականի հաշիւները վերաստուգելու համար մի յանձնաժողով։

2—4

ԵՐԵՒԱՆԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ *յայտնում է ի տեղեկութիւն համայնից թէ խորհրդարանը ի նկատի ունենալով առաջիկայ 1888—1892 քառամեակի քաղաքային ընդհանուր ընտրութիւններն, սոյն 1887 թուականի Սեպտեմբեր ամսոյ 9-ին կայացրած վճռովն ի միջի այլոց կարգադրեց։*

1) *Խորհրդարանի ձայնաւորներ ընտրելու մասին կազմել քաղաքային ընտրողական ժողովներ, առաջին կարգի համար 3-ին, երկրորդ կարգի 7-ին և երրորդ կարգի 11-ին մայիսի 1888 ամի.*

2) *Զը պահանջել կալուածատէրերից քաղաքային հասանելի ապառիկները նոցա կալուածներին վերաբերեալ 1864 թուից սկսած մինչև 1879 ամի.*

3) *Զը պահանջել կալուածատէրերից այն տուգանքը որ նոքա պէտք է վճարէին քաղաքի օգտին կալուածներից հասանելի 10% տուրքը իւր ժամանակին չը վճարելու համար մինչև 29 Սեպտեմբերի 1887 ամի. բացի այս չը պահանջել այս տեսակ տուգանքը 29-ից Սեպտեմբերի 1887 ամի մինչև խորհրդարանի նոր կազմակերպիլն.*

4) *Ընտրողական ցուցակներն աւարտել մինչև փետրվարի 20-ին 1888 ամի.*

5) *Վարչութեան պատրաստած ընտրողական ցուցակներն յայտնել ի տեղեկութիւն համայնից մարտի երեքին 1888 ամի բաժանելով քաղաքացիներին, նմանապէս կպցնելով քաղաքի յայտնի տեղերում և խորհրդարանի դահլիճում 300 օրինակ տպուած յայտարարութիւններ.*

*և 6) Քաղաքի բնակչաց գանգատներն ընտրողական ցուցակների մէջ թոյլ տուած սխալանաց մասին ընդունել Քաղաքային վարչութիւնում երեքից մինչև տասն և եօթն մարտի և այնուհետև համաձայն 27 յօդ. քաղաքային կանոնադրութեան ուղղուած ընտրողական ցուցակներն ներկայացնել խորհրդարանի զննութեանը անշուշտ մինչև 31-ն Ապրիլի 1888 ամի.*

*Ընդ սմին քաղաքային վարչութիւնը հարկաւոր է համարում զգուշացնել քաղաքի բնակիչներին թէ թէպէտ սոյն յայտարարութեան 4-դ հատուածում յիշած ընտրողական ցուցակների աւարտելն խորհրդարանը նշանակել է 20-ին փետրվարի 1888 ամի և այդ ընտրողական ցուցակների մէջ, համաձայն 4-դ հատուածի 17 յօդուածոյ քաղաքային կանոնադրութեան, անկարելի է մտցնել քաղաքի այն բնակիչներին, որոնց վրա մինչև յիշեալ ժամանակը մնացած կը լինեն ապառիկներ քաղաքին հասանելի տուրքերից, բայց համաձայն հրամանի Պետական Սենատի 5-ն փետրվարի 1885 ամի, № 1312, որով բացատրված է քաղաքային կանոնադրութեան 17-դ յօդուածի իսկական միտքը, յիշեալ բնակիչներն պէտք է մտցնվեն ընտրողական ցուցակների մէջ 20 փետրվարի 1888 ամի ժամանակից յետոյ էլ, միայն այն պայմանով, եթէ նոքա կը վճարեն իրանց վրա մնացած ապառիկներն մինչ այն ժամանակ, երբ քաղաքային խորհրդարանը վերջապէս կը հաստատէ ընտրողական ցուցակներն։* 1—3 (ե)

*Լոյս տեսաւ*
Ց. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԿԱԶՄԱԾ

# 1888 Թ. ՕՐԱՑՈՅՑԸ

Բաղկացած է 320 երեսից։ (1887 թ-ինը բաղկացած էր 160 երեսից)

ԸՆԴԱՐՁԱԿ ՑԱՒԵԼՈՒԱԾ

Նոր տարի (բանաստեղծութիւն), խաւարմունք. Շարժական տօները և նոցա միջոցները. Էֆեմերիդի դուշակութիւնը. Ցաղեր և Շարականներ։—Կաղանդ (բանաստ). Այն տօն օրերը, երբ հայոց ու ռուսաց ուսումնարաններում և վարչական տեղերում պարապմունք չէ լինելու։

Ա. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ.—Ժողովրդական կրթութիւնը (եւրոպական տէրութեանց). Ռուսաստանի քաղաքները և նշանաւոր տեղերը՝ բնակիչների թիւով և Մոսկվայից, Ս. Պետերբուրգից ու Նահանգական քաղաքից ունեցած հեռաւորութեամբ։

Բ. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ.—Փ օ ս տ. փոստի կանոնները, փոստի սայլերը (կայարանների հեռաւորութիւնը և դները). Ե ր կ ա թ ու ղ ի. երկաթուղու կանոնները, Ռուսաստանի գլխաւոր քաղաքների երկաթուղիների դների աղիւսակը, Անդրկովկասեան երկաթուղի (կայարանների հեռաւորութիւնը և դները). Շ ո գ ե ն ա ւ. կասպից, Ազովեան և Սև ծովի վրա. փոստային նաւերի երթևեկութեան օրերը, ժամերն ու դները). Սև ծովի ծովեզրեայ քաղաքների չոգենաւերի դների աղիւսակը. Հ ե ռ ա գ ի ր.—Հեռագրի կանոնները։

Գ. Ժամանակագրութիւն.—Համաշխարհային, ռուսաց, հայոց և վրաց պատմութեան նշանաւոր անցքերը. Մեր կաթողիկոսունքը։

Դ. ՇՏԱՏ հոգևորականաց և ժողովրդականաց թեմին հայոց Վրաստանի և Իմերեթի.—Վիճակային կոնսիստորիայ, գործակալութիւնք.—Թիֆլիսի ու թեմի բոլոր քաղաքների եկեղեցիները, միաբանութիւնքը, քահանայից, սարկաւագաց (դպրաց ու ստորին եկեղեցական պաշտօնէից) հոգևոր կոչման մէջ մնելու և ձեռնադրութեան թուականները, նոցա արու զաւակների ու ծխոց թիւը։—Թեմի բոլոր վիճակայքը, ժողովրդոց տների ու եկեղեցեաց թիւը և հոգևորականաց աղգանունները։—Համագումար Վրաստանի և Իմերեթի թեմի. Եղբակացութիւնք։

Ե. ԹԻՖԼԻՍԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ.—Քաղաքային խորհրդի իրաւասունները, հայոց եկեղեցիքը, երեսփոխանները և քահանայք։

Զ. ՄԵՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ.—Ի. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Տէրտէր (բանաստ.).—ԵՐԱՋԱՀԱՆ. Լուսնի երազացոյց։—Զորրորդ չրջան Հայկայ։—Գինն է 15 կոպէկ։ 10-ով առնողին—12 կոպէկ, 200-ով առնողին—10 կոպէկ։

Ծախվում է Զ. Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում։ Կարելի է դիմել և այս հասցէին.—Въ Тифлисъ, на Авлабаръ.—Учителю Ованесу Назарянцъ.

2—5 (ե)

Дозволено цензурою, Тифлисъ 9 ноября 1887 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская ул. д. каз.